ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ... ԼՈՒԻՐԵՐ

Ս. ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 1-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հանդիսավորապես տոնախմբեց Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների հիշատակը: Նախատոնակի արարողության ժամանակ, օրհնությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Միածնաէջ Ս. Տաճար էին բերվել Մայր Աթոռում պահվող Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների- մասունքները:

Տոնի առիթով Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Հուսիկ աբեղա Սմբատյանը:

Ս. Պատարագի ավարտին արարողությանը մասնակից հավատացյալ ուխտավոր հայորդիները հնարավորություն ունեցան հաղորդակից լինելու մասունքների սրբարար զորությանն ու օրհնությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿՈՎ ՀՈՂԱԿՎԵՑ ԱՐԹԻԿԻ ԹԵՄԸ

Դեկտեմբերի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցված Սուրբ եւ Անմահ Պատարագի արարողության ընթացքում Հայրապետական սրբատառ կոնդակով Հայաստանում Արթիկի տարածաշրջանի եկեղեցական համայնքներն առանձնացվեցին Շիրակի թեմից եւ հռչակվեցին իբրեւ նոր՝ Արթիկի թեմ: Նորաստեղծ թեմի առաջնորդ նշանակվեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

Հայրապետական կոնդակում, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, մասնավորապես ասված է. «Փառք ենք բարձրացնում առ Աստված եւ մեր Եկեղեցու բարեպաշտ զավակների հետ կիսում Մեր սրտի անհուն ուրախությունը, որ Տերը պարգեւում է մեզ Իր առատ շնորհները՝ պայծառացնելով մեր

Եկեղեցին, արդյունավորելով քարոզությունը Իր Սուրբ Ավետարանի, բազմապատկելով թիվը Իր Սուրբ Սեղանի սպասավորների եւ նորոգված ու նորակառույց եկեղեցիների, շենացնելով նաեւ մեր նվիրական հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որը Իր բյուր օրհնությամբ միավորում է ազգս ի սփյուռս աշխարհի ու հավատքի լույսը ծագեցնում համայն հայոց վրա:

Հոգեւոր-եկեղեցական մեր կյանքի այս բարեհույս ընթացքները հրամայական են դարձնում նաեւ համայնքների վերակազմակերպումը՝ ի շահ Մեր զավակների հոգեւոր խնամքի: Վերջին տարիներին Հայրապետական սրբատառ կոնդակով Մենք՝ ընդառաջ անհրաժեշտություններին, հոչակեցինք Ֆրանսիայի հայոց թեմի եւ Հայաստանում Վայոց Ձորի ու Տավուշի թեմերի ստեղծումը: Այսօր Արթիկի տարածաշրջանի եկեղեցական համայնքները եւս անհրաժեշտությունն ունեն համախմբվելու որպես մեկ թեմ, որպեսզի եկեղեցավարչական գործունեության առավել արդյունաւոր կազմակերպմամբ առավելագույնս հոգացվեն հոգեւոր կարիքները Մեր զավակների եւ մատուցվող մշտական պաշտպանությամբ, Տիրոջ խոսքի մշտահունչ քարոզությամբ զորանա ու պայծառանա նրանց հոգեւոր կյանքը, նրանց սրտերում անսասան մնան հավատարմությունն ու նախանձախնդրությունը մեր Սուրբ Եկեղեցու եւ նվիրական արժեքների հանդեպ:

Արդ, Հայրապետական այսու կոնդակով Արթիկի տարածաշրջանի եկեղեցական համայնքներն առանձնացնում ենք Շիրակի թեմի կազմից եւ հոչակում ենք ստեղծումը Արթիկի թեմի: Նորաստեղծ թեմի Առաջնորդի պաշտոնում ծառայության ենք կոչում Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանին: Թեմի հոգեւոր իրավասության սահմանը հաստատում ենք Արթիկի տարածաշրջանը՝ Հայրապետական կոնդակին կից գրությամբ ներկայացված համայնքներով: Տիրախնամ թեմի հավատավոր Մեր զավակներին հայրաբար հորդորում ենք, որ ըստ ամենայնի սիրով աջակից լինեն թեմակալ առաջնորդին՝ ի շինություն եւ ի զորություն նորաստեղծ թեմի:

Մենք վստահ ենք, որ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի առաջնորդությամբ եւ քաջեռանդ գործունեությամբ պիտի բարգավաճի Արթիկի թեմը, եւ նոր ձեռքբերումներով պիտի զարդարվի Մեր բարեպաշտ հայորդյաց ազգային եւ հոգեւոր-եկեղեցական կյանքը: Արթիկի թեմի հաստատման այս ուրախ առիթով շնորհավորում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում թեմակալ առաջնորդին, թեմի հոգեւոր դասին եւ բարեպաշտ հաւատացյալներին: Մեր գնահատանքն ենք բերում Շիրակի թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանին, մարզային իշխանություններին ներդրած բարի ջանքերի համար՝ ի խնդիր Արթիկի հավատավոր հայորդյաց հոգեւոր-եկեղեցական կյանքի զորացման եւ տարածաշրջանում մեր Սուրբ Եկեղեցու առաքելության արդյունավորման:

Աղոթում ենք առ Բարին Աստված, որ միշտ ծաղկյալ պահի Արթիկի թեմը՝ մշտատեւ խաղաղություն, բարօրություն եւ հաջողություններ շնորհելով մեր ժողովրդի հավատավոր զավակներին: Թող Աստված հանապազ օրհնությամբ Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի աշխարհասփյուռ մեր ժողովրդին, եւ թող հավետ պայծառ ու անսասան լինի Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

«Հաստատո՛ւն կացէք ի հաւատս, ժրացարո՛ւք, զօրացարո՛ւք: Ամենայն ինչ ձեր սի-րո՛վ լիցի» (Ա. Կորնթ. ԺԶ. 13-14)»:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը նորանշանակ առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսին հանձնեց Արթիկի թեմի հոչակման կոնդակը՝ մաղթելով նրան արգասաւոր ծառայություն ի պայծառություն Արթիկի թեմի եւ բարօրություն հավատավոր ժողովրդի:

Տ. ՀՈՎԱԿԻՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
(կենսագրական)

Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 19-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

1983-1993 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1994-1999 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում:

1999-2000 թթ. ուսումը շարունակել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Զ լսարանում:

1998 թ. սովորել է ԵՀՍ Բոսսեի Էկումենիկ դպրոցում (Շվեյցարիա, Ժնեւ):

2001 թ. սովորել է Դանիայի Արհուս քաղաքի Դիակոնալ դպրոցում՝ ուսումնասիրելով սոցիալական ասպվածաբանություն:

2000 թ. հուլիսի 16-ին, ձեռամբ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. հուլիսից աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում:

2001 թ. հոկտեմբերի 22-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Դրվագներ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պատմությունից» թեմայով՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

2001 թ. նոյեմբերի 11-ին ձեռամբ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2002-2004 թթ. ուսանել է Մոսկվայի հոգեւոր ակադեմիայում (Սերգիեւ Պասադ)՝ ստանալով ասպվածաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2004 թ. հունիսից կրկին ծառայության է անցել Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում:

2004 թ. դասախոսում է Ընդհանրական եւ Հայ Եկեղեցիների պատմություն Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

2004 - 2009 թթ. եղել է Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի եւ հասարակություն» հանձնախմբի անդամ:

2004-ից ԵՀՍ Էկումենիկ պաշտոնյաների ցանցի անդամ է:

2005 թ. ԵՀՍ Հայաստանյան Բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է:

2005 թ. օգոստոսին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ նշանակվել է Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ:

2006 թ. ապրիլի 21-ին Մայր Աթոռում պաշտպանել է վարդապետական թեզ «Էկումենիզմը Ի դարում եւ Հայ Եկեղեցին» թեմայով եւ ապրիլի 23-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

2008- 2009 թթ. հաճախել է քաղաքական դասընթացների երեւանյան դպրոց:

2009 թ. Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի կենտրոնական կոմիտեի անդամ է:

Մասնակցել է 2006 թ. Բրազիլիայի Պորտո Ալեգրե քաղաքում տեղի ունեցած ԵՀԽ 9-րդ համագումարին, 2007 թ. Ռումինիայի Սիբիու քաղաքում համաեւրոպական երրոդ էկումենիկ ասամբլեային եւ 2009 թ. Լիոնում կայացած Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի 13-րդ համագումարին:

2010 թ. ապրիլի 18-ին ձեռամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ստացել է եպիսկոպոսական օծում եւ ձեռնադրություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԺՈՂՈՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ

Դեկտեմբերի 4-6-ը Բոսսեի Էկումենիկ ինստիտուտում (Շվեյցարիա) տեղի ունեցավ էկումենիկ պաշտոնյաների ժողով, որին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցում էր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ծիսահայեցակարգային գրասենյակի պատասխանատու Տ. Զաքարիա աբեղա Բաղումյանը: Ժողովը նվիրված էր 2013 թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 8-ը Հարավային Կորեայի Բուսան քաղաքում տեղի ունենալիք Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 10-րդ ասամբլեայի նախապատրաստական աշխատանքներին եւ ԵՀԽ ապագա ծրագրերին:

Ժողովի ընթացքում ԵՀԽ գլխավոր քարտուղար դր. Օլավ քին. Թվեյթը, բարի գալուստ մաղթելով ներկաներին Բոսսեի Էկումենիկ ինստիտուտ, անդրադարձավ ԵՀԽ 10-րդ ասամբլեայի կարեւորությանը եւ նշանակությանը քրիստոնեական եկեղեցիների կյանքում: Նա նաեւ ներկաներին պատմեց ԵՀԽ ներկայիս գործունեության եւ ապագա տեսլականի մասին՝ շնորհակալություն հայտնելով ԵՀԽ անդամ եկեղեցիներին իրենց գործուն մասնակցության համար:

ԵՀԽ մի շարք պատասխանատուներ հանդես եկան զեկույցներով՝ տարբեր տեսանկյուններից անդրադառնալով Բուսանի 10-րդ ասամբլեայի նախապատրաստական աշխատանքների մանրամասներին:

Էկումենիկ ժողովի ընթացքում Տ. Զաքարիա աբեղա Բաղումյանը ներկաներին փոխանցեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը եւ բարեմաղթանքները՝ ներկայացնելով վերջին շրջանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական

գործունեությունը: Նա նաեւ անդրադարձավ Ռուսանի ասամբլեային Հայ Առաքելական Եկեղեցու պատվիրակության մասնակցությանը:

Ժողովականները մասնակցեցին նաեւ առավոտյան եւ երեկոյան ժամերգություններին եւ հանդիպեցին Էկումենիկ ինստիտուտի ուսանողների հետ, որոնց թվում է նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Արիս աբեղա Տոնոյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՋԱՐՅԱՆԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը, ազատվելով Կենտրոնական Եւրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական պատվիրակի պարտականություններից, 2013 թ. հունվարի 1-ից նշանակվել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ:

Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՋԱՐՅԱՆ
(կենսագրական)

Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը (ավազանի անունը՝ Վրեժ) ծնվել է 1952 թ. Հալեպում:

1959-1964 թթ. սովորել է Բեյրութի Վահան Թեքեյանի անվան տարրական դպրոցում, 1964-1967 թթ.՝ Բեյրութի Հովակիմյան-Մանուկյանի անվան միջնակարգ դպրոցում:

1967թ. ընդունվել է Էջմիածնի Գեւորգյան Հոգեւոր ճեմարան եւ ավարտել 1973 թ.: Նույն՝ 1973 թ. Գեւորգյան ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ «Մխիթար Գոշ. Մեկնություն Երեմիա մարգարեի» թեմայով:

Այնուհետեւ 1973 թ. Ս. Էջմիածնում՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1975 թ. Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցում ստացել է քահանայական ձեռնադրություն՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի:

1973-1974 թթ. աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ որպես կաթողիկոսարանի քարտուղար:

1974-1975 թթ. սովորել է Քենթրբերի Ս. Օգոստինոսի դպրոցում՝ հովվական աստվածաբանություն, 1975-1978թթ.՝ Լոնդոնի Քինգս քոլեջում՝ ստանալով Պսակավոր աստվածաբանության (BD) աստիճան:

1978-1979 թթ. սովորել է Շոտլանդիայի Ս. Անդրյուսի անվան դպրոցում: 1979-1981 թթ եղել է Լոնդոնի Ս. Պետրոս եկեղեցու հոգեւոր հովիվ, իսկ 1981-1986 թթ. պաշտոնավարել որպես Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ, Նոր Կտակարանի եւ Ընդհանուր եկեղեցու պատմության դասախոս:

Միջկրոնական հավաք ԱՄՆ Արեւելյան թեմում

1983 թ. «Վանական շարժման սկզբնավորությունը Հայաստանում» թեմայով պաշտպանել է վարդապետական թեզ եւ Օշականում ստացել վարդապետական զավազան՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի:

1986 թ. «Ս. Բարսեղ Կեսարացու կանոնները» թեմայով պաշտպանել է ծայրագույն վարդապետության թեզ եւ նույն թվականին՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, Օշականում ստացել զավազան:

1986-1988 թթ. Գարեգին Ա. երջանկահիշատակ Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդական փոխանորդ,1988-1991թթ.՝ Նյու Ջերսիի Ս. Ստեփաննոս եկեղեցու հոգեւոր հովիվ, իսկ 1991-1995թթ՝ կրկին ԱՄՆ Հայոց արեւելյան թեմի առաջնորդական փոխանորդ:

1992 թ. ընդունվել է Կոլումբիայի համալսարան եւ պատմության մագիստրոսի (MA) աստիճանով ավարտել 1993 թ:

1995-1999 թթ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ստանձնել է Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի տեսչի պաշտոնը, դասավանդել որպես Նոր Կտակարանի դասախոս:

2000-2002 թթ. եղել է Դալլասի Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ, իսկ 2002-2007 թթ՝ Ֆիլադելֆիայի Ս.Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցու հոգեւոր հովիվ: 2002-2010 թթ. նաեւ պաշտոնավարել է որպես ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդական փոխանորդ, այնուհետեւ 2010թ. նշանակվել Կենտրոնական Եւրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական պատվիրակ:

2011 թ. նոյեմբերի 6-ին ձեռամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ստացել է եպիսկոպոսական օծում եւ ձեռնադրություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՒԱՔ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեանի հրաւէրով միջեկեղեցական հաւաք մը տեղի ունեցաւ առաջնորդարանի կեդրոնին մէջ, Ուրբաթ Նոյեմբեր 30-ին, ի պատիւ Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ Նիւ Եորքի թեմակալ առաջնորդ Թիմոթի արք. Տոլընի, անոր Կարտինալութեան աստիճան ստանալուն առիթով:

Հռոմէական Կաթողիկէ, Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու պետերը, յետ միջօրէի ժամը 12:30-ին, ժամանեցին Ս. Վարդան Մայր Տաճար՝ մասնակցելու համար կարճ արարողութեան մը, որմէ ետք առաջնորդարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն ի պատիւ Կարտինալ Տոլընի: Յետ միջօրէի ընդունելութեան ներկայ էր նաեւ Արթըր Ռաբբի Շնայըր, հիմնադիրը եւ նախագահը «Խղճմտանքի Կոչ Հիմնարկութեան»:

Թեմական առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան իր բարի գալստեան խօսքին մէջ ըսաւ. «Մեր սիրելի հոգեւոր եղբօր, Կարտինալ Տոլընին, կ'ուզեմ յայտնել, ինչ որ նախապէս ալ ըսած եմ, թէ կը յուսամ՝ որ այս Առաջնորդական կեդրոնը միշտ իր տունը կը նկատէ, ինչպէս որ ան տունն է մեր բոլորին՝ որ այստեղ կը գտնուինք: Եւ եթէ այստեղ զգանք որ մեր տան մէջ կը գտնուինք, մաղթանքս այն է որ նաեւ զգանք թէ նոյն ընտանիքին կը պատկանինք եւ իրարու հետ կապուած ենք հասարակաց յոյսերով եւ առաքելութեամբ մը՝ զոր կը բաժնենք:

Սրբազան Հայրը նաեւ բարի գալուստ մաղթեց Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցւոյ եւ Բովանդակ Ամերիկայի եւ Գանատայի Մեթրոպոլիտ Տիխոնին, որ նոյեմբեր 13-ին ընտրուած էր իր պաշտօնին:

Էտուրդտ Կարտինալ Իկլն, Նիւ Եորքի Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ նախորդ թեմակալը, կատարեց բացման աղօթքը: Ան շնորհակալութիւն յայտնեց Խաժակ Սրբազան Հօր, որ կազմակերպած էր օրուան հաւաքը եւ շնորհաւորեց Կարտինալ Տոլընը ասպիճանի բարձրացման առիթով: Տոլընն արքեպիսկոպոս Կարտինալներու ժողովին անդամ կարգուած էր Բենեդիկտոս Պապին կողմէ 2012 փարուան փետրուարին:

Կարտինալ Տոլընն իր երախտագիտութիւնը յայտնեց Խաժակ արքեպիսկոպոսին՝ ցուցաբերուած ջերմ ընդունելութեան համար եւ ըսաւ. «Դուք ի սկզբանէ եղած էք զերդ աղբիւր մը հիւրասիրութեան եւ ջերմութեան»: Ան շեշտեց կարեւորութիւնը Նիւ Եորքի այլեւայլ յարանուանութեանց միջեւ բարեկամական կապերուն եւ սերտ համագործակցութեան: «Այժմ՝ առաւել քան երբեք, պէտք ունինք միասնութեան եւ եղբայրութեան, բան մը՝ որ ունինք այստեղ Նիւ Եորքի մէջ», շեշտեց ան եւ աւելցուց թէ յարանուանութիւններ միասնաբար կրնան հակակշռել անիրաւութիւնը եւ խաղաղութիւնը հետապնդել: Ապա՝ իր խորին ցաւակցութիւնը յայտնեց Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ արք. Մանուկեանի վախճանումին առիթով:

Ամերիկայի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ թեմական առաջնորդ Դեմետրիոս արքեպիսկոպոս խօսեցաւ Ս. Անդրէաս Առաքեալի կեանքին մասին, որուն տօնն էր նոյեմբեր 30-ին, եւ ըսաւ. «Ասիկա մեծ օր մըն է տօնախմբութեան: Մենք ուրախ ենք որ այս առիթով մեր եղբայրներուն հետ կը գտնուինք»: Ան շնորհաւորեց Կարտինալ Տոլընը եւ գնահատեց անոր երկայնմտութիւնը եւ պատրաստակամութիւնը ի պաշտպանութիւն քրիստոնէական հաւատքի: «Կարեւոր է որ ունինք պետեր՝ աշխարհը փոխելու վճռականութեամբ», ըսաւ Դեմետրիոս արքեպիսկոպոսը:

Անդրադառնալով Միջին Արեւելքի տագնապին, ներառեալ Սուրիոյ քաղաքացիական պատերազմը եւ Եգիպտոսի, Լիբանանի եւ Իսրայէլի մէջ շարունակուող հակամարտութիւնը, յոյն առաջնորդը աւելցուց թէ միջեկեղեցական հաւաքներ «մեզ աւելի գիտակից կը դարձնեն այն իրողութեան, որ պէտք ունինք իրարու եւ իրարու գործակցելու հսկայական կարելիութեան»:

Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Արեւելեան Միացեալ Նահանգաց թեմական առաջնորդը՝ արքեպիսկոպոս Մոր Սիրիլ Աֆրէմ Քարիմ անդրադարձաւ՝ քիչ ժամանակի մէջ Կարտինալ Տոլընն բազմաթիւ իրագործումներուն եւ իր համայնքին ծառայելու ի խնդիր

անոր նուիրումին: «Երբ հաւատքը նուազած է հանրային շրջանակներէ ներս, կարեւոր է որ հաւատքը ներմուծուի հանրային մթնոլորտէն ներս», ըսաւ ան: Ան նաեւ խօսեցաւ Սուրիոյ տագնապին մասին եւ խնդրեց հոգեւոր պետերէն որպէս զի աղօթեն եւ աշխատանք տանին շրջանի խաղաղութեան համար:

Ռաբբի Շնայըր խօսեցաւ հաւատքը բարի գործերու միջոցաւ ապրելու մասին: «Դուք կը ծառայէք ոչ միայն Ձեր Եկեղեցւոյ. նաեւ կը ծառայէք Աստուծոյ բոլոր զաւակներուն», ըսաւ ան Կարտինալ Տոլընին: Ապա շարունակեց խօսիլ ազատ երկրի մը մէջ բնակելու առաւելութեանց մասին եւ շեշտեց մարդկային իրաւանց համար մաքառելու կարիքին մասին՝ մանաւանդ աշխարհի այն մասերուն մէջ՝ ուր ազատութիւնը յարաբերաբար խախտուած վիճակի մէջ կը գտնուի: «ՄԱԿ-ը պարտաւոր է դիրք որոշել Միջին Արեւելքի փոքրամասնութեանց առընչութեամբ: Տառապանքի դիմաց լուռ պէտք չէ մնայ աշխարհը», ըսաւ ան:

Մետրոպոլիտ Տիխոն Ռուս Ուղղափառ սրբանկարներ նուիրեց Կարտինալ Տոլընին եւ Խաժակ Սրբազան Հօր: «Մենք կը ներկայացնենք Ձեզի մեր բարեմաղթութիւնները եւ ի դէմս Ուղղափառ Եկեղեցւոյ՝ կը բաղձանք Ձեզի հետ գործել», ըսաւ ան:

Թեմական առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան Տոլընն Կարտինալին նուիրեց սպասաւորական Աստուածաշունչ մը՝ որ պատրաստուած է Երուսաղէմի մէջ: «Նիւ Եորքի մեր սիրելի արքեպիսկոպոսի համաշխարհային հայեացքը, աղքատներու եւ տառապեալներու նկատմամբ գթածութիւնը, գեղեցկութեան ի խնդիր ձգտումը, ընտանիքի եւ համայնքի ամենօրեայ առաքինութեանց նկատմամբ սէրը կը ներկայացնեն Նիւ Եորք քաղաքի ազնուագոյն ոգին: Որպէս Նիւ Եորքի բնակիչ, Կարտինալ Տոլընն խորապէս նուիրուած է իր Եկեղեցւոյ աւանդութեան, բայց որպէս Նիւ Եորքի բնակիչ ան նաեւ զօրավիգ կը կանգնի եւ նոյն իսկ կը ծափահարէ բազում այլ աւանդութիւններ՝ որոնք այս երկիրը դարձուցած են հզօր, մեծ եւ բարի», ըսաւ Սրբազան Հայրը:

Յետ միջօրէի հանդիպման աւարտին՝ Անտիոքի Ուղղափառ Եկեղեցւոյ Նիւ Եորքի արքեպիսկոպոս եւ Բովանդակ Հիւսիսային Ամերիկայի Մետրոպոլիտ Ֆիլիփ կատարեց փակման աղօթքը:

Ներկայ էին նաեւ Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ Պրուքլինի թեմին առաջնորդ Նիքոլըս Եպս. Տիմարգիոյ եւ Լոնկ Այլընտի թեմին առաջնորդ Ուիլիըմ Եպս. Մըրֆի, Ասորի Ուղղափառ Եկեղեցիէն Մոր Թայթոս Եէլտոյ արքեպիսկոպոսը, Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցիէն Մայքըլ եպիսկոպոսը, Անտիոքեան Ուղղափառ Եկեղեցիէն Նիքոլըս եպիսկոպոսը Հայր Մոյզէս Պոկտատին կը ներկայացնէր Հիւսիսային Ամերիկայի Ղպտի Ուղղափառ Եկեղեցւոյ առաջնորդ Դաւիթ եպիսկոպոսը, Հայր Քէս Մահիթամա կը ներկայացնէր Եթովպական Ուղղափառ Եկեղեցւոյ Ապունէ Զէքարիաս արքեպիսկոպոսը, եւ Հայր Թովմաս Կարապետեան կը ներկայացնէր Միացեալ Նահանգաց եւ Գանատայի հայ կաթողիկէից Առաջնորդ Միքայէլ եպս. Մուրատեանը:

Ուրբաթ օրուան հաւաքոյթին՝ առաջնորդ Սրբազան Հօր կողքին Արեւելեան առաջնորդարանը կը ներկայացնէին թեմական պատուիրակ եւ առաջնորդարանի Միջեկեղեցական յարաբերութեանց վարիչ Գերշ. Տ. Վիգէն արք. Այգազեան, Գերշ. Տ. Եղիշէ արք.

Կիզիրեան, առաջնորդի փոխանորդ Հոգշ. Տ. Սիմէոն աբդ. Օրապաշեան, Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Հոգշ. Տ. Մամիկոն վրդ. Քիլէճեան, Գլարա եւ Գրիգոր Ջօհրապ Տեղեկատուութեանց կեդրոնի վարիչ Հոգշ. Տ. Դանիէլ վրդ. Ֆընտրըգեան, Ս. Ներսէս Աստուածաբանական Ճեմարանի տեսուչ Արժշ. Տ. Մարտիրոս Ա. քհնյ. Շեւեան: Սոյն հաւաքոյթին կը մասնակցէր նաեւ Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդը Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալպանտեան, որ Նիւ Եորք կը գտնուէր այցելութեամբ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի 2012 թ. հաղթողների մրցանակաբաշխության հանդիսությունը:

«Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀՀ Կրթության ու գիտության նախարարության համագործակցության շրջանակներում իրականացվում է 2004 թվականից: Մրցույթը կազմակերպվում է հովանավորությամբ Մայր Աթոռի բարերար ամերիկաբնակ Սիլվա Տեր-Ստեփանյանի: Մրցույթն անցկացվում է ՀՀ բոլոր մարզերում եւ Երեւան քաղաքում՝ մարզային եւ հանրապետական փուլերով, որի արդյունքներն ամփոփվում են հանդիսավոր մրցանակաբաշխության ընթացքում: Մրցույթին մասնակցում են «Հայոց Եկեղեցու պատմություն», «Հայոց պատմություն», «Հայոց լեզու եւ գրականություն» «Բնագիտություն» (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն) առարկաների ուսուցիչներ, ինչպես նաեւ տարրական դպրոցների դասավարներ:

Հանդիսությունն սկսվեց Տերունական աղոթքով, որին հաջորդեց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի ողջույնի խոսքը:

ՀՀ ԿԳ նախարարի անունից ողջույնի եւ շնորհավորանքի խոսք ասաց ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Կարինե Հարությունյանը: Նա անդրադարձավ Հայոց Եկեղեցու կարեւոր դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում, մասանավորապես կրթության եւ գիտության ոլորտում: Տիկ. Հարությունյանը կարեւորեց նաեւ համագործակցությունը Հայ Առաքելական Եկեղեցու եւ ՀՀ ԿԳ նախարարության միջեւ՝ երախտագիտություն հայտնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ կրթության ոլորտում ցուցաբերվող զորակցության համար: Ապա մրցույթի անցկացմանն անդրադարձավ ԿԳՆ հանրակրթության վարչության պետ Նարինե Հովհաննիսյանը:

Այնուհետեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վանական խորհրդի նախագահ եւ Հրա-

փարակչական բաժնի փնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանն ու ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Կարինե Հարությունյանը մրցույթի հաղթողներին հանձնեցին մրցույթի մասնակցության վկայականներ, դրամական պարգևներ եւ հոգեւոր գրականություն:

Առաջին մրցանակի արժանացան «Հայոց պատմություն» առարկայի ուսուցիչ Արշալույս Զուրաբյանը (ՀՀ Լոռու մարզ, Վանաձորի թիվ 11 ավագ դպրոց), «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցչուհի Մարիամ Հարությունյանը (Երեւան, թիվ 113 միջնակարգ դպրոց), «Հայոց լեզու եւ գրականություն» առարկայի ուսուցչուհի Գայանե Անդրեասյանը (ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյանի ավագ դպրոց), «Քիմիա» առարկայի ուսուցչուհի Սեդա Հակոբյանը (ՀՀ Արագածոտնի մարզ, Աշտարակի թիվ 5 ավագ դպրոց), դասավար Անուշ Ալավերդյանը (Երեւան, թիվ 51 հիմնական դպրոց): Երկրորդ մրցանակ ստացան 9, իսկ երրորդ մրցանակ՝ 14 ուսուցիչներ:

Հայոց ուսուցչի մեծարման գեղեցիկ այս արարողության ընթացքում հոգեւոր երգերի կատարմամբ ելույթ ունեցավ Արարատյան հայրապետական թեմի «Արարատ» հոգեւոր միության «Արարատ» երգչախումբը՝ Ռաֆֆի Միքայելյանի խմբավարությամբ:

Հանդիսության ավարտին ամենքին Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը փոխանցեց Նաթան Սրբազանը՝ շնորհավորելով մրցույթին մասնակից բոլոր ուսուցիչներին: Անդրադառնալով ուսուցչի առաքելությանը ԻԱ. դարում՝ Սրբազանը մասնավորապես նշեց. «Սիրելի ուսուցիչներ, այսօր ձեր գործը դժվարին է, որովհետեւ մի կողմից ուսուցչի առջեւ ծառացած են նոր մարտահրավերներ, մյուս կողմից դասական ուսուցիչ-աշակերտ հարաբերության փոփոխություններն են, որոնք կատարվում են ժամանակի թելադրանքով: ...Սակայն ուսուցչին բոլոր ժամանակներում պահել է մի բան. իր ներքին նվիրվածության ճրագի լույսը, որովհետեւ սա հայ իրականության անջնջելի, անփոփոխելի կարեւոր մասունքն է: Եթե ուսուցիչն իր մեջ չունենա իր ուսուցչի կանթեղի լույսը, նա չի կարող լուսավորել, եւ դա այլեւս լուսավորություն չի կոչվի, այլ պարզ աշխատանք: Կրթությունը, ուսուցչությունը, մանկավարժությունը պարզ աշխատանք չէ, դա կոչում եւ նվիրում է, նվիրվածություն է սեփական ազգի մտքին, հոգուն եւ ապագային»:

Վերստին շնորհավորելով մրցույցի հաղթողներին՝ Նաթան Սրբազանը վստահություն հայտնեց, որ այս մրցանակները իբրեւ խրախուսանք եւս մեկ անգամ կբոցավառեն նրանց հոգու կանթեղները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐ ԻԳՆԱՏԻՈՍ Դ. ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Դեկտեմբերի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Անտիոքի Հույն Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Սինոդին, հոգեւոր դասին եւ հավատացյալ ժողովրդին՝ Անտիոքի եւ Համայն Արեւելքի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Իգնատիոս Դ. Պատրիարքի մահվան կապակցությամբ:

Հայրապետական ցավակցագրում մասնավորապես ասվում է. «Նորին Սրբազնությունն իր ողջ կյանքի ընթացքում քաջաբար ծառայեց Սիրիայի Եկեղեցուն եւ քրիստոնեական ամուր առաջնորդության օրինակ դարձավ հատկապես Մերձավոր Արեւելքի ընթացիկ ճգնաժամի պայմաններում:

Իգնատիոս Պատրիարքը մեծ հաջողությունների հասավ Անտիոքի Պատրիարքության հոգեւոր կյանքի վերանորոգության գործում, եւ նրա ջանքերի շնորհիվ զգալի առաջընթաց արձանագրվեց ուղղափառ երիտասարդ սպասավորության զարգացման, նոր ասպվածաբանական հաստատությունների բացման, ինչպես նաեւ միջեկեղեցական եւ միջկրոնական երկխոսությունների զարգացման մեջ:

...Մենք աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ երջանկահիշատակ Պատրիարքի հոգին ընդունի Իր երկնային արքայության մեջ եւ հայցում Ամենակարողին, որ խաղաղություն պարգեւի Սիրիայի ժողովրդին քաղաքական անկայունության եւ քաղաքացիական պատերազմի այս դժվարին օրերին»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ Մայնց քաղաքի Կութէնպէրկ թանգարանի մէջ 7 Դեկտեմբերին բացումը կատարուեցաւ հայ ձեռագիրներու ցուցահանդէսի մը, որ նուիրուած է հայ տպագրութեան 500-ամեակին: Բացման առթիւ Մայնց ժամանած էր ՀՀ վարչապետ Տիգրան Սարկիսեանը: Ներկայ էին նաեւ Ռայնլանտ Ֆալց նահանգի վարչապետ Քուրթ Պէքը, Մայնցի քաղաքապետը, թանգարանի պաշտօնէութիւնը եւ բազմաթիւ այլ հիւրեր: Բացման հանդիսութեան մասնակցեցաւ նաեւ թեմիս առաջնորդ Գարեգին արքեպս. Պէքճեանը ընկերակցութեամբ փոխառաջնորդ Հեգշ. Սերովբէ վրդ. Իսահանեանի:

Հալլէի Մարթին-Լութէր Համալսարանի դասախօս փրոֆ. տոքթ. Արմէնուհի Դրոսդ-Ապգարեան բացման առթիւ դասախօսեց հայ տպագրութեան պատմութիւնը ներկայացնելով: Ցուցահանդէսը կը ներկայացնէ Գերմանիոյ մէջ պահուող հնատիպ գրքեր, Հայաստանի ազգային գրադարանէն եւ մատենադարանէն հին ձեռագրեր, ինչպէս նաեւ հայերէն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրք», որ տպագրուած է 1512թ. Վէնէտիկի մէջ Յակոբ Մեղապարտի կողմէ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ՀԱՅՈՑ ԳԵՐՄԱՆԻՈՅ

ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ԱՐԹԻԿԻ ՆՈՐԱՀՈՂԱԿ ԹԵՄՈՒՄ

Ս/թ դեկտեմբերի 9-ին, Արթիկի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Աստվածածին եկեղեցիների հարեւանությամբ գործող բազիլիկում տեղի ունեցաւ ուխտի պատարագ, որը մատուցեց Արթիկի թեմի առաջնորդ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

Սրբազան արարողության ընթացքում կատարվեց նաեւ նորանշանակ առաջնոր-

դի գահակալության արարողությունը: Պատարագի ընթացքում ,Եւս առաւելե աղոթքից առաջ խորան բերվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Տ. Հովնան եպս. Հակոբյանը:

Հրաժեշտի խոսքով հանդես եկավ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը: Նա մասնավորապես ասաց «...13 տարիների մեր ծառայության արդյունքը եղավ այն, որ Արթիկը իր տարածաշրջանով հանդերձ հասունացավ անկախ թեմ դառնալու համար եւ այսօր մենք հպարտությամբ, բայց թախիծը սրտներումս բաժանվում ենք Արթիկից»:

Միքայել սրբազանի խոսքին հաջորդեց թեմակալ առաջնորդի խոսքը: Նա շնորհակալություն հայտնեց Սրբազան Հորը եւ այն անձանց, ովքեր նախորդ տարիներին հոգ էին տարել Արթիկի տարածաշրջանի հոգեւոր կյանքի մասին: Սրբազանն իր գոհունակությունը հայտնեց Արթիկում գտնվող եկեղեցասեր եւ պատրաստակամ ժողովրդին, ինչպես նաեւ անդրադարձ կատարեց եկեղեցաշինության հրամայականին, թեմի առաջիկա անելիքներին եւ գերակա ուղղություններին:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին փոխմարզպետ Սեյրան Պետրոսյանը, ԱԺ պատգամավոր Մուշեղ Պետրոյանը, Արթիկի քաղաքապետ Արսեն Աբրահամյանը, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, բարերարներ, հյուրեր, սպասավորներ քույր Եկեղեցիների:

Հավարտ սրբազան արարողության եղավ հյուրասիրություն, որի ընթացքում հյուրերը առիթ ունեցան ծանոթանալու առաջնորդ Հովակիմ Սրբազանի հետ:

ԴԻՎԱՆ ԱՐԹԻԿԻ ԹԵՄԻ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՍԻՐԻԱՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գործող Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական հիմնադրամը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ «Եկեղեցիների համատեղ գործողություն» ալյանսի ֆինանսավորմամբ նախաձեռնել է արագ արձագանքման ծրագիր՝ Հայաստանում ապաստան գտած սիրիահայերին օգնելու նպատակով: Այն նախատեսում է սնունդ եւ առաջին անհրաժեշտության հիգիենայի պարագաներ տրամադրել առավել կարիքավոր 200 ընտանիքների:

Հումանիտար օգնության եւ պարենային ծրագրի մեկնարկը տրվեց դեկտեմբերի 10-ին: Ծրագիրն իրականացվում է Արարատյան Հայրապետական թեմի հետ համագործակցաբար, նախաձեռնությանն իր զորակցությունն է բերել նաեւ «Երեւան Սիթի» խանութների ցանցը: Դեկտեմբերի 11-ին եւ 17-ին: Թեմի առաջնորդարանում հիմնադրամը շահառու ընտանիքներին կտրամադրի հատուկ քարտեր, որոնցով հնարավոր կլինի որոշակի պարբերականությամբ անհրաժեշտ գնումներ կատարել «Երեւան Սիթի» խանութներում:

Ծրագրի կազմակերպչական աշխատանքներից բացի Կլոր Սեղանի աշխատակիցներն ու թեմի հոգեւորականները կիրականացնեն նաեւ տնայցեր, կծանոթանան այդ ընտանիքների կարիքներին, կցուցաբերվի հոգեւոր աջակցություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Դեկտեմբերի 12-14-ը Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում, նախագահությամբ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարք Կիրիլ Ա.-ի, տեղի ունեցավ Համառուսական ազգային համաժողովը՝ նվիրված Կովկասում խաղաղությանը:

Համաժողովին հրավիրված էր մասնակցելու նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակությունը, որի կազմում էին Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, Պյատիգորսկի հոգեւոր հովիվ Տ. Արամ ավ. քահանա Հունանյանը, Կիսլովոդսկի հոգեւոր հովիվ Տ. Սարգիս քահանա Պողոսյանը եւ Ստավրոպոլի հոգեւոր հովիվ Տ. Գրիգորիս քահանա Պողոսյանը:

Համաժողովի պլենար նիստին ողջույնի խոսքով հանդես եկավ Հովակիմ եպիսկոպոսը՝ Նորին Սրբություն Կիրիլ Ա. Պատրիարքին փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի եղբայրական ողջույնները: Դիմելով համաժողովի մասնակիցներին Սրբազան Հայրը մասնավորապես ասաց. «Հայ ժողովրդի զավակները մշտապես կարեւորել են խաղաղությունն ու համագործակցությունը տարբեր ազգերի ու մշակույթների միջեւ: Այդ է պատճառը, որ Հայ Եկեղեցին մշտապես մասնակից է տարբեր կառույցների կողմից իրականացվող խաղաղասիրական ծրագրերին: Հարկ է նշել Կովկասյան տարածաշրջանի կրոնական առաջնորդների եռակողմ եւ քառակողմ հանդիպումները, որոնք կազմակերպվում են Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարքի նախաձեռնությամբ ու ջանքերով: Այնուամենայնիվ, երբեմն ստիպված ենք ցավով արձանագրել, որ հակառակ հոգեւոր պետերի գործադրած ջանքերին, աշխարհում չեն դադարում պատերազմներն ու ահաբեկչությունը, ազգամիջյան բախումները, որոնք երբեմն ուղեկցվում են կրոնական եւ ազգային հակամարտություններով եւ էթնիկ ատելությամբ: Քիչ չեն դեպքերը, երբ կրոնը գործիք է դառնում այն անձանց ձեռքին, որոնց շահերն ու հետապնդած նպատակները չեն աղերսվում կրոնի, հավատքի եւ Աստծու հետ: Մտահոգ ենք, որ մեր օրերում կարող է արդարացվել ու նաեւ հերոսացվել մարդասպանը...»:

Դեկտեմբերի 13-ին Հայ Եկեղեցու պատվիրակները մասնակցեցին նաեւ Ստավրոպոլի Կազանյան Ս. Աստվածածնի տաճարի օծման արարողությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համառուսական ազգային համաժողովի նախագահությունը

Գրերի գյուտից մինչեւ գրատպություն

«ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻՑ ՄԻՆՉԵՒ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 14-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ եւ մասնակցությամբ ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայորդյաց տանը տեղի ունեցավ հայ գրատպության 500-ամյակին նվիրված «Գրերի գյուտից մինչեւ գրատպություն» հանրապետական մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր ցերեկույթ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի եւ ՀՀ Կրթության ու գիտության նախարարության նախաձեռնած մրցույթն անցկացվել է երեք փուլով՝ տարածաշրջանային, մարզային, հանրապետական:

Տարածաշրջանային փուլին մասնակցել են ավելի քան 420 դպրոցներ, մարզային փուլին՝ տարածաշրջաններում լավագույնը ճանաչված 71 դպրոցներ, իսկ հանրապետական փուլին, որ անցկացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդյաց տանը՝ եռօրյա մրցույթ-փառատոնի ձեւաչափով, ներկայացան 12 դպրոցներ:

Հանդիսության սկզբում բացման խոսքով հանդես եկավ Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը, որ ջերմորեն ողջունեց կրթության ու գիտության մշակների ներկայությունը Ս. Էջմիածնում: Ողջույնի խոսքից հետո ներկաները դիտեցին «Շողակաթ» հեռուստաընկերության պատրաստած տեսաֆիլմը մրցույթի անցկացման գործընթացի մասին:

Այնուհետեւ հանդես եկավ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Անդրադառնալով Մայր Աթոռի եւ նախարարության միջեւ ձեւավորված համագործակցությանը՝ պրն. Աշոտյանը նշեց. «Այս միջոցառումը եզրափակում է Մայր Աթոռի եւ Կրթության ու գիտության նախարարության ծավալած բուռն համագործակցության շրջանը: Այս տարի մենք կարողացանք պահպանել ավանդական դարձած գաղափարներն ու ծրագրերը եւ համալրեցինք մեր համագործակցությունը նոր գաղափարներով ու նոր մոտեցումներով՝ եւս մեկ անգամ ամրապնդելով անքակտելի կապը կրթության ոլորտում»: Կարեւորելով Մայր Աթոռի դերը կրթության զարգացման գործում՝ նախարարը նշեց. «Շարունակենք համատեղ իրականացնել բոլոր այն միջոցառումները, որոնք մեզ թույլ են տալու կյանքի կոչել մեր հավատն առ Աստված, առ հայ ժողովուրդը եւ կերտել հայ քաղաքացու նոր կերպար. ժամանակակից քաղաքացի, որը գիտի որտեղից է գալիս, ինչ արժեք է իր մեջ կրում եւ գիտի, որ, ժամանակակից լինելով հանդերձ, պարտավոր է եւ պետք է լինի ավանդական»:

Այնուհետեւ տեղի ունեցավ մրցանակաբաշխության արարողությունը:

Հայրապետական մրցանակի արժանացավ Արմավիրի մարզի Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցը, «Լավագույն սցենար» անվանակարգում՝ Երեւանի Ա. Միկոյանի անվան թիվ 166 հիմնական դպրոցը, «Լավագույն երաժշտա-

կան կապարում» անվանակարգում՝ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցը, իսկ «Լավագույն բեմադրություն» անվանակարգում՝ Գեղարքունիքի մարզի Գավառի ավագ դպրոցը:

Մի շարք այլ դպրոցներ արժանացան խրախուսական հատուկ մրցանակների: «Աբի ոգու պարգեւ» մրցանակին արժանացավ Սյունիքի մարզի Քարահունջի միջնակարգ դպրոցը, «Մասնակիցների հաջողված ընդգրկում» մրցանակին՝ Տավուշի մարզի Բերդ քաղաքի թիվ 3 հիմնական դպրոցը, «Կերպարների հաջողված մարմնավորում» մրցանակին՝ Երեւանի թիվ 14 հատուկ դպրոցը, «Լավագույն մենակատար» մրցանակին՝ Շիրակի մարզի Գյումրիի թիվ 8 միջն. դպրոցի աշակերտուհի Հասմիկ Քուշկյանը, «Բեմադրության յուրահատուկ լուծումներ» մրցանակին՝ Արագածոտնի մարզի Ազարակի միջնակարգ դպրոցը, «Ներդաշնակ ասմունք» մրցանակին՝ Լոռու մարզի Վանաձորի թիվ 20 հիմնական դպրոցը, «Հաջողված երգչախմբային կատարում» մրցանակին՝ Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցը, «Երաժշտական հագեցվածություն» մրցանակին՝ Արարատի մարզի Արտաշատի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

Հանդիսության ավարտին ներկաներին իր օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ողջունելով «Գրերի գյուտից մինչեւ գրատպություն» հանրապետական մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր միջոցառման մասնակիցներին՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց այն հսկայածավալ աշխատանքի համար, որ ամիսներ շարունակ կատարվել է դպրոցների տնօրինության, մանկավարժների ու սաների կողմից:

«Մեր դարավոր պատմության հոլովույթներում Մաշտոցի գործի խորհուրդը եղել է հիմքը հայոց հարատեւության՝ արդի ժամանակներում մնալով ոգեշնչող ուժն ու զորությունն ազգային մեր կյանքի եւ գիտամշակութային ձեռքբերումների: Մեր օրերում առավել քան անհրաժեշտ են գիտելիքներով զինված եւ հավատքի լույսով օժտված աստվածասեր եւ հայրենասեր հայորդիք, որ պիտի ճանաչեն եւ իրենց կյանքով ու գործով արժեւորեն հայ ինքնությունը կերտած ազգային մեր արժեքները, լուսավորյալ մտքով պատասխաններ գտնեն ու ճանապարհներ ուղենշեն մեր ազգային կյանքի վերածաղկման եւ նոր առաջընթացի համար», - մասնավորապես ասաց Վեհափառ Հայրապետը:

Վերջում Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Կրթության եւ գիտության նախարարին ու նախարարության աշխատակիցներին, մարզային բոլոր իշխանություններին, Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանին, կենտրոնի աշխատակազմին, ինչպես նաեւ մրցույթի մասնակից բոլոր դպրոցների տնօրեններին, մանկավարժներին ու սաներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ալեն Դելոնը Ս. Էջմիածնում

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԱՆՏԻՈՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Դեկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել Անտիոքի եւ Համայն Արեւելքի նորընտիր Պատրիարք Հովհաննես Ժ.-ին:

Հայրապետական շնորհավորականում մասնավորապես ասվում է. «Աստծու կամքով Ձեզ վստահվեց Անտիոքի հնամենի Աթոռի առաջնորդությունը Սիրիայի եւ Միջին Արեւելքի համար այս ծանր ժամանակաշրջանում: ...Այժմ, իբրեւ բարի հովիվ, Դուք կոչված եք ամբողջանվեր ծառայելու Սիրիայի հավատացեալոց կարիքներին՝ համագործակցելով նաեւ այլ Եկեղեցիների եւ կրոնների հետ: Թող Աստված զորացնի Ձեզ՝ շարունակելու Ձեր նախորդների անխոնջ աշխատանքը՝ հոգալու Իր ժողովրդի հոգեւոր կարիքները, առկա հակամարտության պայմաններում խրախուսելու հաշտությունը եւ հետամուտ լինելու շարունակական միջկրոնական երկխոսության»:

Վեհափառ Հայրապետը նաեւ վստահություն է հայտնել, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Անտիոքի Հույն Ուղղափառ Պատրիարքության հարաբերությունները կշարունակեն պտղաբերել եւ զարգանալ ի փառս Աստծո եւ Սիրիայում ու Միջին Արեւելքում խաղաղության ու կայունության հաստատման համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԵՐԱՍԱՆ ԱԼԵՆ ԴԵԼՈՆԻՆ

Դեկտեմբերի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ֆրանսիացի աշխարհահռչակ դերասան Ալեն Դելոնին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրին ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռի պատմական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, անդրադարձ կատարեց նաեւ հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների դարավոր բարեկամությանը եւ դրա ամրապնդման գործում Ֆրանսիայի հայ համայնքի կարեւոր դերակատարությանը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը, ընդգծելով, որ հայորդիները մշտապես առանձնակի համակրանքով ու սիրով են դիտել Ալեն Դելոնի ֆիլմերը, իր գնահատանքը հայտնեց նրան մարդկությանը մատուցած ծառայությունների համար:

Հանդիպման ավարտից հետո մեծանուն դերասանն այցելեց Մայր Աթոռի թանգարաններ եւ ծանոթացավ հայ ժողովրդի ազգային-հոգեւոր գանձերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են նոր նշանակումներ Մայր Աթոռի կառույցներում:

Ֆրանսիայի Հայոց թեմի հոգեւոր սպասավոր Տ. Կարապետ վարդապետ Հարությունյանը ծառայության է կոչվել Գուգարաց թեմում: Իսկ Մայր Աթոռի միաբան Տ. Եղիա աբեղա Խաչատրյանը, ավարտելով Փարիզի Կաթոլիկ համալսարանում իր ուսումնառությունը, նշանակվել է Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի ուսումնական գծով փոխտեսուչ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նոր նշանակումներ են կատարվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում:

Մայր Աթոռի միաբան Տ. Առեն վարդապետ Շահենյանը, ազատվելով Գեղարքունյաց թեմում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Արագածոտնի թեմում: Մայր Աթոռի միաբան Տ. Տիրան աբեղա Պետրոսյանն ազատվել է Շվեյցարիայի հայոց թեմում ստանձնած իր պարտականություններից եւ ծառայության կոչվել Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի Հայրապետական պատվիրակությունում՝ որպես Հայրապետական պատվիրակի պաշտոնակատար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Արթուր-Մինաս Սելեանը (Կանադայի թեմ)
Դիքսի Արմենուհի Տեր-Գրիգորյան Փեթթին (Կանադայի թեմ)
Միհրան Սիմոնյանը (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Դեւան Առուստամյանը (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Վազգեն Եսքիճյանը (Ֆրանսիայի թեմ)

ԼԱՆՋԱԽԱՉ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Տ. Գեորգ քհն. Արշակյանը (Իրաքի թեմ)
Տ. Մեսրոպ քհն. Գաբրիելյանը (Իրաքի թեմ)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

ՀԲԸՄ «Հայ Կին» կազմակերպությունը (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Մահջ Կյուզելյանը (Ֆրանսիայի թեմ)
Գաբրիել և Մարի-Թերեզ Պեքզեզյանները (Ֆրանսիայի թեմ)
Օվսաննա Թերեզ Պերպերյանը (Ֆրանսիայի թեմ)
Ալիս Պոտուրյանը (Ֆրանսիայի թեմ)